

### ՏԻՔՈՒԱ ԿՈՒՈՒՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌՈՒԻ

«Ռուս Գրականութեանց Բարեկամներու Ընկերութենէն», Տրաւտրուած ըլլալով մասնակցիլ Նիքոլա Կոլոլի Տրաւտրուածակի Տանդէսին որ կատարուեցաւ Մոսկուա՝ Մայիս 6ին, Անահիտ անօրէնը դրկեց Փրանսերէն լեզուով Տետեւեալ ուղերձը .

«Ռուս գրականութիւնը խորին ազդեցութիւն ունեցած է ուսական Հայաստանի գրագէտներուն և նոյն իսկ Թուրքիոյ Հայ նորակէպագիրներէն ոմանց վրայ : Անհանձն գիտութեան ոգին, մարդկային լայն եղբայրութեան մը բուն ծարաւը, բացարձակ արգարութեան բաղձանքը, կեանքի ուղղակի գիտողութեան և պարզ ու հաւատարիմ արտայայտութեան ձրգտուելը, արուեստը աւանդ արուեստականութեան՝ որ կը յայտնուի իբր ինքնաբեր ու կենդանի ծագակալութիւն մը մարդկային Տոգոյն, այս բոլոր յատկանիշները ուս և մեծ գրագէտներուն, խանդավաւօրէն սիրուած են ժամանակակից Հայ գրականութեան մէկ քանի լաւագոյն ներկայացուցիչներէն, և կազմած են էական տարրերէն մին որ, ցեղային խառնուածքի և ազգային գեղեցկագիտական աւանդութեանց հիմնական տարրին ու արեւմտեան Եւրոպայի մեծ գրականութեանց ազդեցութեանը հետ, ձևացուցած են Հայոց նոր գրականութիւնը :

«Իմ հիացման հարկս մատուցանելով ուս գրականութեան հայր ու հիմնադիր Նիքոլա Կոլոլի յիշատակին, ուրախ եմ ուրեմն որ կարող եմ այս առթիւ՝ յայտնել միևնոյն ատեն Հայ գրականութեանց երախտագիտութիւնը Տանդէսի ուս մտածման վարպետներուն :»

### ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՄԻՔԻՆԿԸ

Ապրիլ 25ի իրիկունը, Գաֆէ տիւ Կլօպ արահին մէջ, Փարիզի Հայերը գումարեցին միթիթիկ մը՝ Կիլիկիոյ կոտորածներուն դէմ բողոքելու համար, կը նախագահէր Տիգրան խան Բեկէկեան : Հայոց եւ Եւրոպացի խառն ըզմութիւն մը ներկայ էր : Խօսեցան բազմութիւ բանախօսներ, — Շիրվանդադէ, Շահմուրատեան, Մ. Զանըմեան, Անթուան Պրիմօ, «Անահիտ» անօրէնը, եւն. :

Որոշուեցաւ պատգամաւորութիւն մը ուղարկել օսմանեան դեպքանին եւ Յրանայի արտաքին գործոց նախարարին : Որոշուեցաւ նաեւ դրկել երախտագիտութեան հեռագիր մը Մերիլինի անգլիական դեր-հիւպատոսին՝ իր ցոյց տուած դիւցազնական մարդասիրութեանը համար, եւ հետեւեալ հեռագիրը Սելանիկի «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Բօմբէէէն .

«Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Բօմբէէն, Սելանիկ. Փարիզի հայ գարուք 1. Ձեզ կը ընտրուաւ քաններու համար զոր կը բաքիէ՛ Ստիմանդոթիքիցը պատգամելու եւ բռնակառնական բեմիք կործանելու : 2. Ձեզ կը յայտնէ իր ցաւակցութիւնները ազատութեան մարտիտու օպաներու վաս սպանման համար : 3. Կը յայտնէ իր գայրոյթը Կիլիկիոյ շարդերուն հանդէպ եւ ձե՛նէ կը պահանջէ միջանե՛ս՝ զինուարական մարմնի մը անմիջական ուղարկման համար՝ որպէս զի կոտորածները դարդին եւ յանցաւորները պատժուին : 4. Կը մաղթ յարգանակը՝ բոլոր ցեղերուն համար հաւատարմեան, արդարութեան եւ ազատութեան բազմակարեան մը, եւ միութիւնը բոլոր անկեղծ ազատակներուն :

Սելանիկի «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» քօմիթէն պատասխանեց հետեւեալ հեռագրով .

«Սաջամբ ձեր մտղաբարկան հետաքիր» չորս յորուածով, զգածուած եմ ձեր ցաւակցութիւններէն . ընտրակալութիւն մը մտղաբաններուն համար . բնութեան իլը կ'իմանա՛մ, այժմ հանգարտութիւն Ասամաի մէջ . կ'ապահովենեմ որ ա՛մէն բան պիտի ընեմ անկարգութեանց վաւարանը ջեջելու համար . չորտոյ յորուածին մէջ յայտնուած իղը մերն ալ է :»

Այս հեռագրին «քննութեան ելըը կ'իմանաք» խօսքը քիչ մը երկդիմի է . կը թուի որ Սելանիկի քօմիթէն ա՛լ կարծած է թէ Հայերն ալ պատասխանատուութեան բաժին մը ունին Ատանայի շարդերուն մէջ . «Ատանայի մէջ հանդարտութիւն » կը հուշակէ այդ հեռագիրը, եւ միևնոյն պահուն Ատանայի երկրորդ շարդը կը սկսէր :

### Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Փարիզի Հայերը՝ նախաձեռնութեամբ Տիգրան խան Բեկէկեանի՝ կազմեցին հանգանակիչ մասնախումբ մը, որ արդէն հաւաքած է Հայոցմէ 30,000 Ֆրանք . մէկ քանի Յրանայցիներ